

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

### *Աշոտ Մարկոսյան Դավիթ Աղաջանյան*

Մարդկային քաղաքակրթության զարգացման պատմությունը վկայում է (հատկապես 17-րդ դարից սկսած), որ այն ընթացել է շուկայական մրցակցային մեխանիզմների և տնտեսության պետական կարգավորման պայմաններում: Ընդ որում, մերթընդմերթ գերակայել է մեկը կամ մյուսը: Դրան համապատասխան էլ հաջորդաբար իրար փոխարինելու են եկել տնտեսական գործընթացներում պետության դերի ակտիվացման կողմնակիցները (առաջին հերթին՝ քեյնսականները, որոնց սկզբունքները տասնամյակներ շարունակ, մինչև 20-րդ դարի 70-ական թվականները, գերակայում էին ինչպես տեսական տնտեսագիտությունում, այնպես էլ գործնականում՝ տնտեսության պետական կարգավորման բնագավառում) և այն տնտեսագիտական դպրոցի ներկայացուցիչները, որոնք առաջնային էին համարում շուկայական մեխանիզմները և պետության խնդիրն էին համարում այդ մեխանիզմներին աջակցելը (մոնետարիզմ, առաջարկի տնտեսագիտություն, նեոլիբերալիզմ, որոնք մեծ նշանակություն ստացան 1980-90-ական թթ.):

Աշխարհի բոլոր երկրներում պետական ինստիտուտը գտնվում է համընդհանուր ուշադրության կենտրոնում: Համաշխարհային տնտեսությունում կատարվող անընդհատ փոփոխությունները ստիպում են գտնել պետությանը վերապահված հիմնական հարցերի պատասխանները. ինչպիսի՞ն պետք է լինի պետության կարգավորիչ դերը տնտեսական համակարգում, ո՞ր հարցերով պետք է զբաղվի, որոնցով՝ ոչ, այս կամ այն իրավիճակներում ինչպիսի՞ օպտիմալ որոշումներ պետք է կայացնի:

### *Ներածություն*

Վերջին տարիներին մի շարք երկրներում իրականացվող անցումը պլանայինից շուկայական համակարգի տնտեսական ճգնաժամ առաջացրեց այդ երկրներում: Այս հանգամանքը նորից կասկածի տակ դրեց տնտեսության կարգավորման գործում պետության դերի միջամտության կարևորությունը:

Եվ եթե տնտեսագիտությունն ու սոցիալական գիտությունն ունենին մշակված պատրաստի դեղատոմսեր կապիտալի տնտեսակարգի վրա կառուցված պետության կառավարման գործառույթների և սկզբունքների, ինչպես նաև տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ, ապա շուկայական տնտեսությանն անցնող նախկին

համայնավարական երկրները վերափոխումները սկսեցին և իրականացրին «դատարկության» մեջ, քանի որ սոցիալիզմից կապիտալիզմին անցման մասին չկային համապատասխան համադարմաններ: Թեև պատմության տեսանկյունից անցած 15-20 տարին կարճ ժամանակահատված է, սակայն նորանկախ պետություններից յուրաքանչյուրն, այդ թվում մեր հանրապետությունը, գնում է շուկայի ձևավորման իր ճանապարհով՝ հաշվի առնելով այն ընդհանուրը, որը ստեղծվել է մյուս ազգերի կողմից՝ դրան ավելացնելով անցման առանձնահատկությունները և հիմնախնդիրների լուծման այն ուղիները, որոնք առկա են զարգացման այս կամ այն ժամանակահատվածում: Այս տեսանկյունից տեղին է հիշել ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը, որտեղ նշված է, որ Հայաստանը մրցունակ շուկայական հարաբերությունների վրա հիմնված տնտեսությամբ և միջազգային հայտանիշներին համապատասխանող ժողովրդավարական կառավարման համակարգով ժամանակակից երկիր դարձնելու գործում պետական կառավարման համակարգի դերն առաջնային է: Այդ առումով կառավարության հիմնական գերակայություններ են շարունակում մնալ պետական կառավարման ինստիտուտների արդյունավետության և հասարակությանը հաշվետու լինելու մակարդակի բարձրացումը, պետական-մասնավոր համագործակցության արմատավորումը և խորացումը, տնտեսության մեջ պետության դերի շարունակական հստակեցումը [1, էջ 5-6]:

Դեռևս հին հունական փիլիսոփայության մեջ պետության տնտեսական դերի և նրա գործառույթների հարցը բուռն վիճաբանություն հարուցող թեմաներից էր: Ադամ Սմիթից սկսած՝ այդ հիմնախնդիրը դրվեց որակական նոր հարթության վրա [2]: Սակայն մինչև օրս էլ այն արդիական է, և, ինչպես գիտական բազմաթիվ հիմնախնդիրներ, այն ևս վերջնական և միանշանակ լուծում դեռևս չի ստացել: Նշված հիմնախնդրի լուծման վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ, հաճախ նաև իրարամերժ, իսկ երբեմն էլ միմյանց լրացնող տեսակետներ, որոնք փորձում են որոշակի ելակետային դրույթների հիմքի վրա ներկայացնել պետության ներգործության սահմանները տնտեսության կարգավորման գործում: Այս տեսանկյունից տնտեսագիտության տեսությունները բավական հետաքրքիր զարգացում են ապրել: Ուստի, ամենևին էլ պատահական չէ, որ ներկայումս գոյություն ունեն տնտեսության պետական կարգավորման տարբեր մոդելներ՝ իրենց յուրահատուկ ազգային դրսևորումներով [3, էջ 5]:

Պետությունը՝ որպես մարդկային հասարակության զարգացածությունը բնութագրող քաղաքակրթական մակարդակի արտահայտություն, իրեն յուրահատուկ գործառույթներն իրականացնում է համապատասխան լծակների օգտագործման ճանապարհով, հետևապես, վերջինիս գործառնական

նշանակությունը պարզելու համար անհրաժեշտ է, նախևառաջ, բացահայտել պետություն երևույթը և, մասնավորապես, նրա դերը տնտեսության կայացման և զարգացման գործում: Նշենք նաև, որ դեռևս գոյություն չունի պետություն հասկացության այնպիսի հստակ և որոշակի սահմանում, որը ներառեր նրա էության և դերակատարության (այդ թվում նաև տնտեսության ոլորտում) բոլոր կողմերը:

### 1. Պետության էությունը և նրա գործառույթները

Դեռևս քաղաքակրթության արշալույսին, մասնավորապես՝ Պլատոնն իդեալական պետության հիմնական սկզբունքը համարում էր արդարությունը, իսկ վերջինիս ընկալումը, ինչպես հայտնի է, հասարակության զարգացածության որոշակի աստիճանի դրսևորում է: Հետևապես, պետությունը քաղաքակրթական որոշակի մակարդակի արտահայտությունն է: Պլատոնը կարծում էր նաև, որ ցանկացած պետությունում միշտ էլ կան իրար թշնամի երկու՝ հարուստների և աղքատների պետություններ: Ելնելով դրանից՝ պլատոնյան պետության բացասական տեսակը հանդես է գալիս չորս ձևերով. միբոկրատիա, օլիգարխիա, բռնապետություն և դեմոկրատիա: Ընդ որում, Պլատոնի կարծիքով՝ մեծամասնության իշխանությունը (դեմոկրատիա) ոչինչ չի նշանակում, որովհետև պետության համար շատ կարևոր է կառավարման ունակությունը և արդարությունը:

Ըստ անտիկ աշխարհի խոշոր մտածողներից մեկի՝ Արիստոտելի, պետության գաղափարի հիմքում ընկած են երկու սկզբունքներ՝ բարեկամությունը և արդարությունը: Նրա կարծիքով՝ պետությունն իրավահավասար քաղաքացիների հանրություն է՝ լավագույն ապրելակերպ ապահովելու նպատակով [4, c. 130]: Ասել է թե՛ պետությունը նաև համակարգ է, որը ձգտում է առավելագույնի հասցնել ազգային ներուժի օգտագործումը, այսինքն՝ այն նաև ազգային հոգեբանությանը, ավանդույթներին և դրանց ներքին կարգավորմանը համապատասխան սկզբունքների կիրառումն է: Այս առումով նշենք, որ այժմ էլ բազմաթիվ գիտնականներ, առանց ժխտելու տնտեսական գործոնների տեղն ու դերը, մերժում են դրանց մենաշնորհը՝ պնդելով, որ պետության կայացման հարցում իրենց պատշաճ դերն են խաղում կրոնական, աշխարհայացքային, ընկերային ու այլ պատկերացումները, հոգեբանական մղումները: Օ.Շպենգլերի կարծիքով՝ մշակույթն ազգի գոյատևումն է պետության ձևով [5, c. 471]: Փաստորեն, պետությունն ազգի ինքնակազմակերպման բարձրագույն ձևն է՝ հիմնված մշակույթի անհրաժեշտ մակարդակի վրա: Պատահական չէ, որ հզոր մշակույթի կրողներն են այն հավաքականությունները, որոնք ունեցել են և ունեն հզոր պետություն: Այլ խոսքով՝ պետականությունը մշակույթի մակարդակ է, իսկ իբրև

այդպիսի մակարդակ Ի.Կանտն ընդունում էր բարոյականը: Դա նրա պետության իդեալի կորիզն է: Որպես կազմակերպման բարձրագույն ձև՝ Ի.Կանտը պետությունը սահմանում էր որպես իրավական օրենքներին ենթարկվող բազմաթիվ մարդկանց միասնություն [6, c. 253]:

Ի տարբերություն նախորդների՝ Ջ.Լոկը գտնում էր, որ «Պետության մեջ մարդկանց միավորման գերագույն նպատակը... նրանց սեփականության պահպանումն է» [7, c. 72]: Հեզելն «Իրավունքի փիլիսոփայություն» աշխատության մեջ անդրադառնալով քաղաքացիական հասարակության բնութագրական հատկանիշներին՝ կարևորում է պահանջմունքների համակարգը, սեփականության պաշտպանությունը և ընդհանուր շահի հոգածությունը [8, c. 233]:

Ջ.Գորթնին նշում է, որ պետության տարբերակիչ բնույթը մարդկանց գործողությունների կարգավորման համար հարկադրանքի ուժի կիրառման մենաշնորհի իրավունքն է [9, էջ 886]: Իսկ մարքսիստական ընկալմամբ՝ պետությունը մեքենա է մի դասակարգի կողմից մյուսին ճնշելու համար:

Այսօր էլ, իհարկե, վերոնշյալ դրույթները պետության կարևորագույն գործառույթներից են, սակայն հասարակության զարգացմանը զուգընթաց՝ պետության կողմից իրականացվող գործառույթների շրջանակն ավելի է ընդլայնվել և այսօր, բացի նվազագույն գործառույթներից (պաշտպանություն, օրինականության ապահովում, սեփականության իրավունքի պաշտպանություն, մակրոտնտեսական կառավարում, առողջապահություն), պետությունն իր վրա է վերցրել նաև շրջակա միջավայրի պահպանության, հակամենաշնորհային քաղաքականության, սպառողների իրավունքների պաշտպանության, գործազրկության մակարդակի նվազեցման և ապահովագրման ու բազմաթիվ այլ խնդիրների լուծման պատասխանատվությունը: Այդ պատճառով էլ պետության ներուժի և նրա դերի միջև ճիշտ համամասնության որոշումը կենսականորեն անհրաժեշտ է պետության գործառույթների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Այստեղ հատկապես պետք է ընդգծել, որ զարգացմանը զուգահեռ մեծանում է տնտեսության և նրա կարգավորման կարևորությունը, քանի որ յուրաքանչյուր երկրի տնտեսական համակարգը նյութական և ոչ նյութական բարիքներ արտադրողների ու սպառողների միջև հատուկ կարգավորվող մեխանիզմ է: Ըստ որում, տնտեսական համակարգը, լինելով հասարակության զարգացման վճռորոշ գործոնը, օրեցօր ընդլայնվում է, քանի որ մեծանում են թողարկվող արտադրանքի անվանացանկը, տեսականին, աշխատանքի բաժանման ու մասնագիտացման հետևանքով անընդհատ ճյուղավորվում են արտադրողների տնտեսական կապերը և սպառողների հետ

հարաբերությունները: Այդ ամենի հետևանքով տնտեսությունը դառնում է չափազանց դինամիկ: Այս տեսանկյունից էլ տնտեսության կառավարման հիմնախնդիրն արտադրության մասնակիցների գործողությունների կոորդինացումն է: Ցանկացած երկիր տնտեսական ծաղկման համար պարտական է արտադրողների ջանքերի համաձայնեցված գործողություններին, այն դեպքում, երբ ճգնաժամը նրանց միջև եղած հակասությունների (չհամաձայնեցված գործողությունների) հետևանք է:

Որպես պետությանը վերապահված բացառիկ գործառույթ կարելի է նշել այնպիսի գուտ հանրային բնույթի բարիքների ապահովումը, ինչպիսին են անվտանգությունը, կարգուկանոնը, իրավապահպանումը: Կան նաև այնպիսի հանրային բարիքներ, որոնք կարող են տրամադրվել և՛ պետական, և՛ մասնավոր ընկերությունների կողմից, օրինակ՝ ապահովագրություն (այդ թվում նաև կենսաթոշակային), կրթություն, գիտություն, առողջապահություն, կապի և տրանսպորտային ծառայություններ, ինչպես նաև բանկային գործունեություն (ընդ որում, չի բացառվում նաև մասնավոր կենտրոնական բանկի գոյությունը):

Ինչպես վերը թվարկված որոշ բարիքների արտադրությունը (որոնք գուտ հանրային բնույթի չեն), այնպես էլ որոշ գործառույթներ, որոնք կապված են շուկայի թերացումների և արտաքին բացասական ազդեցությունների վերացման հետ, համարվում են պետության համար վիճելի, այսինքն՝ դրանք կարելի է տրամադրել նաև ոչ առևտրային կազմակերպություններին:

Կան նաև պետական միջամտության համար անթույլատրելի ոլորտներ, ինչպիսիք են, ասենք, զանգվածային լրատվամիջոցները (խոսքն ամբողջությամբ ՁԼՄ-ին տիրապետելու մասին է), շահույթ ստանալու նպատակ հետապնդող ձեռնարկատիրական գործունեությունը և այլն: Այսօր զարգացած պետությունները մասնավոր ընկերություններին տրամադրում են նույնիսկ այնպիսի կարևոր ոլորտում գործելու հնարավորություն, ինչպիսին ռազմական արդյունաբերությունն է: Օրինակ՝ ԱՄՆ պաշտպանության նախարարությունն իր բյուջեի մոտ կեսը ծախսում է մասնավոր ընկերություններին տրվող պատվերների վրա [10, c. 177]:

Այս ամենն, իհարկե, պայմանական է, և գոյություն ունեն պետության դերին, տնտեսությանը միջամտության չափին վերաբերող բազմաթիվ տեսություններ, որոնք ներառում են, այսպես կոչված, «նվազագույն» պետության հայեցակարգից մինչև Պարետոյի օպտիմալության տարբերակը:

Տնտեսագիտության տեսության մեջ մինչև վերջին ժամանակներս այդ հիմնախնդրի լուծման վերաբերյալ գոյություն ունեին երկու միմյանց հակադիր մոտեցումներ: Համաձայն առաջինի, հասարակական արտադրության առավելագույն արդյունավետության կարելի է հասնել դրա յուրա-

քանյուր մասնակցին անսահմանափակ տնտեսական ազատություն տալով: Մակայն տնտեսության այդպիսի կառավարման ձևին յուրահատուկ են ճգնաժամերը և սոցիալական հակասությունները:

Հակադիր տեսակետի կողմնակիցները գտնում են, որ արտադրության մասնակիցների գործողությունները պետք է ենթարկվեն հասարակության իշխանության գլխավոր ինստիտուտի՝ պետության կողմից իրականացվող կոշտ սոցիալական կարգավորման (ինչ արտադրել, երբ, որքան, ում համար և այլն), որը տիրապետում է արտատնտեսական հարկադրանքի իրավունքին և ուժին: Հասկանալի է, որ արտադրության վարչական մեթոդներով կազմակերպումն օբյեկտիվորեն ժխտում է շուկան, որը հնարավոր է միայն արտադրողների տնտեսական ինքնուրույնության պայմաններում: Տնտեսության կարգավորման երկրորդ մոտեցման դեպքում նկատվում են ավելի մեծ թերություններ. քրոնիկական դարձած դեֆիցիտ, որը հաճախ խարխլում է ամբողջ տնտեսության հիմքերը, և տոտալիտարիզմ, որը ոչնչացնում և արմատախիլ է անում տնտեսական մրցակցությունը և ստեղծագործ աշխատանքի նախաձեռնությունը (այս ամենի ականատեսը դարձանք նախկին Խորհրդային Միության ժամանակ):

Եվ միայն ներկա հասարակությունն ապացուցեց արտադրության կազմակերպման և սոցիալ-կարգավորելի տնտեսության ստեղծման «կապիտալիստական» և «սոցիալիստական» երկու անընդունելի համարվող պատմական ծայրահեղությունների հաղթահարման իրավական հնարավորությունը, որի պայմաններում թեև պահպանվում է շուկան, սակայն այն «սանձահարվում» է պետության կողմից: Նոր՝ «խառը» տնտեսական համակարգում արտադրողի տնտեսական ինքնուրույնությունը դառնում է հարաբերական, իսկ կարգավորումը՝ կողմնորոշող:

Առանձին տեսակետների համաձայն (Նոզիկի հայեցակարգ), նվազագույն տնտեսական գործառույթներով օժտված պետությունը տրամադրում է միայն մեկ հանրային բարիք. պաշտպանություն բռնությունից, գողությունից ու խաբեությունից և հասարակության անդամների համար ապահովում է պայմանագրերի կատարումը: Ըստ այդմ, վերաբաշխման գործառույթը սահմանափակվում է այդ նվազագույն ծախսերով:

Մեկ այլ (թերևս նույնպես ծայրահեղացված) ուղղություն կառավարությանը հնարավորություն է տալիս իրականացնել այնպիսի գործառույթներ, որոնց միակամ հավանություն են տալիս հասարակության անդամները: Այս դեպքում հնարավորություն է ստեղծվում օրինական հարկահավաքությունից զանձված գումարներն օգտագործել երկրի տնտեսական իրադրության և բնակչության սոցիալական վիճակի բարելավման նպատակով՝ ելնելով Պարետոյի հայեցակարգի դիրքերից, այն է՝ բարելավել հասարա-

կության գոնե մեկ անդամի բարեկեցությունն այնպես, որ հասարակության մնացած անդամների բարեկեցությունը չնվազի: Մեփական շահերին հետամուտ մարդը, բնականաբար, կհամաձայնվի կառավարության կողմից գործադրվող բոլոր այն միջոցառումներին, որոնք նպատակաուղղված են տնտեսական իրադրության նման բարելավմանը:

Նշված տեսական դրույթները, պարզ է, ներառում են ավելի իրատեսական միջանկյալ իրավիճակներով պայմանավորված բազմաթիվ մոտեցումներ (տարբերակներ), որոնք օգտակար են տնտեսական քաղաքականության ընտրության հարցում և հնարավորություն են ստեղծում հիմնավորել զարգացման տվյալ փուլում պետության զգալի կամ նվազ միջամտության անհրաժեշտությունը: Ու թեև այժմ տարբեր պետությունների գործառույթներն ունեն որոշակի տարբերություններ, այնուամենայնիվ, դրանք կարելի է ընդհանրացնել և ներկայացնել հետևյալ տեսքով (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Պետության գործառույթները				
	Այնտեղ, որտեղ շուկայական համակարգը չի գործում			Արդարության ապահովման ոլորտում
Նվազագույն գործառույթներ	<b>Տարրական հասարակական բարիքների տրամադրում</b> <i>պաշտպանություն, օրինականություն և կարգուկանոն, սեփականության իրավունք, մակրոտնտեսական կառավարում, առողջապահության պետական համակարգ</i>			<b>Աղքատների պաշտպանություն</b> <i>աղքատության դեմ պայքարի ծրագիր, տարաբնույթ աղետներից տուժածներին օգնություն</i>
Միջին աստիճանի բարդության գործառույթներ	<b>Արտաքին գործոնների հաղթահարում</b> <i>նախնական կրթություն, շրջակա միջավայրի պահպանություն</i>	<b>Մենաշնորհների կարգավորում</b> <i>կոմունալ ոլորտների կարգավորում, հակամենաշնորհային քաղաքականություն</i>	<b>Անկատար տեղեկատվության հաղթահարում</b> <i>ապահովագրում, ֆինանսական կարգավորում, սպառողների իրավունքների պաշտպանություն</i>	<b>Մոցիայական ապահովագրության ապահովում</b> <i>աղքատների թռչանների ապահովագրում, ընտանեկան նպաստների համակարգ, գործազրկության ապահովագրում</i>
Ակտիվ միջամտության գործառույթներ	<b>Մասնավոր կառույցների գործունեության կոորդինացում</b> <i>շուկաների օժանդակում, նախաձեռնությունների կոորդինացում</i>			<b>Վերաբաշխում</b> <i>ակտիվների վերաբաշխում</i>

Պետության գործառույթները, վերջին հաշվով, հանգում են զարգացման ժառանգականության, հաջորդականության ապահովմանը, քանի որ կոնկրետ ժամանակաշրջանում ապրող ցանկացած սերունդ ձգտում է իրականացնել իր շահերն ու նպատակները, իսկ որևէ ազգի կամ հասարակության երկարաժամկետ նպատակները չեն կարող իրագործվել առանց պետության: Այս հարցում շուկայական տնտեսության մեխանիզմների վրա նույնպես չի կարելի հենվել, քանի որ վերջինիս նշանաբանը «այստեղ և հիմա» շահույթ ստանալն է: Այսպիսով, պետության անքակտելի պարտականությունը, առաքելությունն ու բացառիկ իրավասությունը հանգում են տվյալ տարածքում հասարակության և տնտեսության անընդհատ և հարատև գործունեության ապահովմանը: Ելնելով պետության՝ որպես յուրահատուկ առաքելություն իրականացնող կառույցի, յուրահատկություններից կարելի է առանձնացնել վերջինիս հետևյալ գործառույթները.

1. *Ինտեգրացիոն*, որը ենթադրում է ժամանակի և տարածության մեջ գործունեության կազմակերպում, նախաձեռնությունների և հնարավորությունների համատեղում քաղաքացիների կյանքի նյութական հիմքի ապահովման նպատակով: Այն ներառում է այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են հանրային բարիքների արտադրությունը, սպառված ռեսուրսների վերարտադրությունը, գործունեության համապատասխան պայմանների ստեղծումը և այլն, որոնք ապահովում են հասարակության տնտեսության և պետության կենսագործունեությունը: Հատկապես ժամանակակից աշխարհում մեծ նշանակություն է ձեռք բերում պետության կողմից գիտելիքների ձեռքբերման, փոխանակման և տարածմանն աջակցելը, որը ևս մտնում է ինտեգրացիոն գործառույթների մեջ:
2. *Ինստիտուցիոնալ գործառույթ*: Խոսքը վերաբերում է ինստիտուտների՝ ձևակարգված (ֆորմալ) և չձևակարգված (ոչ ֆորմալ) օրենքների, կանոնների և հանրային կյանքի նորմերի ստեղծմանն ու պահպանմանը: Գործառույթների այս խմբի մեջ հատկապես կարևոր է պետության սահմանափակող (արգելող) գործառույթը, որը, փաստորեն, որոշում է օրինականության սահմանները: Մրա մեջ են ներառվում նաև հակամենաշնորհային, մրցակցության պաշտպանության, հակաձգնաժամային և այլ քաղաքականությունների մշակումը և իրագործումը:
3. *Չափանիշաստեղծ գործառույթ*, որը ենթադրում է ոչ միայն նյութական, մտավոր, գեղագիտական, մշակույթի ոլորտի վարքագծի լավագույն կանոնների հաստատում, այլ նաև դրանց համեմատման մեթոդաբանության մշակում, համաձայն որի, այս կամ այն ստեղծագործությունը համարվում է օրինակելի:



4. *Օրինակաստեղծ*, որը կարող է դիտվել որպես նախորդի մասնավոր դեպք, սակայն, քանի որ հատկապես կարևոր է անցումային տնտեսություններում, դիտվում է որպես առանձին գործառույթ: Այն ենթադրում է պետության տեսանկյունից էլիտար համարվող խավի ձևավորում, որը պետք է օրինակ ծառայի ողջ հասարակության համար: Հենց այդ էլիտան պետք է ներգրավվի պետական կառույցներում աշխատանքի, որտեղ պահանջվում են այնպիսի անձնական որակներ, ինչպիսիք են ազնվությունը, հայրենասիրությունը, սոցիալական պատասխանատվությունը, մտավոր զարգացման բարձր մակարդակը:
5. *Պաշտպանական գործառույթ*: Սա ամենապարզ, սակայն ամենակարևոր գործառույթն է, որն ուղղված է տվյալ պետության տարածքային ամբողջականության և անվտանգության, կարգուկանոնի ապահովմանը, ռազմավարական նշանակության նյութական, ֆինանսական, էներգետիկ և տեղեկատվական ռեսուրսների պահպանության վերահսկմանը, սոցիալական (անհատներ) և տնտեսական (կազմակերպություններ) սուբյեկտների իրավունքների պաշտպանությանը և այլն:

Ակնհայտ է, որ վերոհիշյալ գործառույթների կարևորությունը նույնը չէ տարբեր երկրների և զարգացման տարբեր փուլերի համար: Այսպես, պատերազմների և հակամարտությունների ժամանակ առաջնային է դառնում պետության պաշտպանական գործառույթը, իսկ օրինակաստեղծ գործառույթի դերը դառնում է նվազագույն: Համեմատաբար կայուն զարգացման ժամանակաշրջանում մեծանում է ինտեգրացիոն, իսկ անցումային շրջանում՝ ինստիտուցիոնալ և օրինակաստեղծ գործառույթների դերը: Սա բացատրվում է նոր ինստիտուտների ստեղծման և արմատավորման, նոր միջավայրում տնտեսավարող սուբյեկտների գործունեության կոնկրետ չափանիշների (էտալոն) ստեղծման անհրաժեշտությամբ, ինչպես նաև բարեփոխումների իրականացումն ապահովող անձանց խմբի կազմավորման կարևորությամբ: Անցումային ժամանակաշրջանի վերջում առավել կարևոր է դառնում չափանիշաստեղծ գործառույթը՝ ձեռք բերելով կազմակերպական-կարգավորիչ բնույթ:

Այսպիսով, կարելի է միանշանակ ասել, որ պետության գործառույթների դասակարգման որևէ վերջնական և համընդհանուր (ունիվերսալ) տարբերակ գոյություն չունի: Տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր պետություններում հասարակական կյանքում ընդհանրապես և տնտեսական կյանքում՝ մասնավորապես, պետության դերին ներկայացվող պահանջները փոփոխվում են՝ կապված հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և բազմաթիվ այլ իրողությունների հետ: Սակայն մի

բան հստակ է. այդ գործառույթները ժամանակի ընթացքում ունեցել են անընդհատ ընդլայնման միտում:

Հետադարձ հայացք նետելով մարդկության ոչ վաղ անցյալի պատմությանը՝ պետք է նշել, որ դասական կապիտալիզմի ձևավորման սկզբնական շրջանում պետությունը բոլորովին չէր միջամտում տնտեսական գործընթացներին: Ձեռնարկատիրական գործունեությանը պետության չմիջամտելու սկզբունքը տեսականորեն հիմնավորվել է անգլիական և ֆրանսիական տնտեսագիտական մտքի կողմից: Այդ ժամանակաշրջանի պատկերացմամբ պետությունը պետք է տնտեսության վրա ներգործեր միայն «բնական իրավունքի» սահմաններում, այն է՝ ապահովեր մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը և յուրացման մասնավոր բնույթը: Այս դրույթներն իշխող էին մինչև 19-րդ դարի կեսերը, և եթե հաշվի չառնենք դասական տնտեսագիտության հիմնադիրներից մեկի՝ Ա. Սմիթի կողմից կատարված պետական միջամտության անհրաժեշտությանը վերաբերող որոշ բացառությունները, այդ ժամանակաշրջանի տնտեսագիտական միտքը գործնականում որևէ տեղ չէր հատկացնում տնտեսական գործընթացների վրա պետության համակարգված ազդեցությանը:

Մարքսիստական սոցիալիզմի գազափարախոսները, հենվելով իրենց նախորդների (անգլիական դասական քաղաքատնտեսություն, գերմանական դասական փիլիսոփայություն և ֆրանսիական սոցիալիզմ) տեսական դրույթների վրա, ձևավորեցին ուրույն գիտական ուղղություն: Նրանք իրենց տեսության մեջ հանգեցին պատմության ներքին տրամաբանության տեսանկյունից ոչ ճիշտ եզրակացության, այն է՝ ապագայում պետությունը, որպես այդպիսին, պետք է վերանա: Պատմության հետագա ընթացքն ապացուցեց, որ հետզհետե պետության գործառույթների շրջանակներն, ընդհակառակը, ավելի են ընդլայնվում: Շնորհից այս առումով նշում է, որ Կ. Մարքսը ներկայացրել է «սպեկուլյատիվ, գրքային ուսմունք՝ առանց իմանալու աշխարհը և մարդուն» [11, էջ 45]: Հետաքրքիր է նաև պետության դերի վերաբերյալ 20-րդ դարի նշանավոր հոգեվերլուծաբան Կարլ Յունգի կարծիքը, ով գտնում էր, որ մարդը պետությունը դիտում է որպես հենարան և ցանկանում է, որպեսզի իր փոխարեն մտածեն և պատասխանատվություն կրեն ուրիշները՝ ի դեմս պետության: Հասարակությանը բավարարում է այն, որ իրեն հագցնում, կերակրում և դաստիարակում են որպես հասարակական միավորի և զվարճացնում են զանգվածային չափանիշներին համապատասխան: Երբ պետությունն իր վրա է վերցնում վճիռների իրականացումը, նշանակում է, որ անձն իր բարոյական պատասխանատվությունը փոխանցում է պետությանը [12, էջ 55]: Իհարկե, սա Յունգի (և ոչ միայն նրա) կողմից դիտվում է որպես բացասական երևույթ, սակայն

իրականությունն այն է, որ ցանկացած պետություն դրսևորում է իր դերի մեծացման միտում, իսկ դրա պատճառները բազմազան են:

Նշենք դրանցից մի քանիսը.

1. Պետության դերի մեծացումը կարող է պայմանավորվել հասարակական միջավայրի մարտահրավերներով, օրինակ՝ տեխնիկական առաջընթացով, ժողովրդագրական փոփոխություններով, տնտեսական համակարգի փոփոխությամբ և այլն [13]:
2. Պետության դերի ուժեղացումը կախված է նաև ներքին քաղաքական գործընթացներից. քաղաքական մշակույթի, պետության գործառույթների նկատմամբ տարբեր հասարակական և քաղաքական կազմակերպությունների, ինչպես նաև արհմիությունների հայացքների փոփոխությունները կարող են վճռորոշ լինել «ուժեղ պետության» ձևավորման գործում:
3. Պետության դերի մեծացումը կարելի է կապել նաև վերջինիս՝ տնտեսական աճի ապահովման դերի հետ: Ինչպես նշում է ամերիկացի տնտեսական պատմաբան Ֆ.Գերշենկրոնը, այն երկրները, որոնք ավելի ուշ են որդեգրել ինդուստրացման կամ այլ խոշորամասշտաբ տեխնոլոգիական և տնտեսական բարեփոխումների ուղին, որպես կանոն, ունեն առավել ընդգրկուն պետական հատված [14, p. 123]: Այս դեպքում պետությունը հանդես է գալիս որպես տնտեսության լոկոմոտիվ՝ իր տրամադրության տակ եղած ռեսուրսները նպատակաուղղելով տնտեսության տեխնիկական վերազինմանը, գիտական ծրագրերին, ներդրումների աճին և կառուցվածքային քաղաքականությանը: Հենց այսպիսի ճանապարհ են անցել հետպատերազմյան Ֆրանսիան, Գերմանիան, Ճապոնիան և նախկին ԽՍՀՄ-ը: Այս օրինակներն ապացուցում են շուկայի անկատարության վերաբերյալ տեսությունները. արագ տնտեսական զարգացումը հաճախ առավել հեշտ է ձեռք բերվում պետության օգնությամբ, քան միայն «տնտեսանելի ձեռքի» վրա հիմնվելով:
4. Պետության գործառույթների ընդլայնումը կարող է թելադրվել նաև նրա զարգացման ներքին օրինաչափություններով: Ինչպես ցանկացած համակարգ, պետությունն (ի դեմս իր ինստիտուտների) ևս հակված է ինքնապահպանման և ինքնավերարտադրման: Այս տեսանկյունից, պետությունը կարող է դիտվել որպես մի ինքնատիպ մենաշնորհային կառույց, որի վարքը շատ դեպքերում նման է շուկայում գործող մենաշնորհային ընկերություններին:
5. Կապված վերջին ժամանակահատվածում կլիմայի համատարած տաքացման, ջրհեղեղների, հսկայական տարածքների անապատաց-

ման, համաշխարհային օվկիանոսի ռեսուրսների յուրացման և տիեզերքի համատեղ օգտագործման ջանքերի կենտրոնացման, համաշխարհային էներգետիկ հիմնախնդիրների լուծման հետ՝ մեծանում է պետությունների կարևորությունը:

Ամենին չթերագնահատելով պետության գործառույթների ձևավորման վրա վերոհիշյալ գործոնների ազդեցությունը՝ կարծում ենք, որ տնտեսությունում պետության դերի վրա խիստ էական ազդեցություն է ունեցել նաև տնտեսագիտության զարգացումը, թեև որոշ հեղինակներ կարծում են, թե տնտեսագետների ներդրումը պետական քաղաքականության գործում չափազանցված է: Պիտեր Բաուերն, օրինակ, քննադատելով Ջ.Մ. Քեյնսի այն միտքը, թե «աշխարհն առաջ է շարժվում տնտեսագետների և քաղաքական փիլիսոփաների մտքերի շնորհիվ», նշում է, որ կրոնական տարբեր ուղղությունների ստեղծողներն (Բուդդա, Քրիստոս, Մուհամեդ) ու մեծ գորավարները (Ալեքսանդր Մակեդոնացի, Հուլիոս Կեսար, Նապոլեոն) շատ ավելի մեծ ազդեցություն ունեն հասարակական կյանքի վրա, քան տնտեսագետները [15]: Այնուամենայնիվ, պետք է արժանին մատուցել տնտեսագետներին, հատկապես, եթե հաշվի առնենք, որ նրանցից մի քանիսի (Ա.Սմիթ, Կ.Մարքս, Ջ.Քեյնս և այլն) մտքերը շրջադարձային ազդեցություն են ունեցել պետությունների տնտեսական քաղաքականությունների ձևավորման վրա:

Անդրադառնանք նրանցից մի քանիսին:

Ադամ Սմիթը տնտեսության պետական կարգավորման խնդիրը դրեց որակական նոր հարթության վրա: Նա իր գլխավոր աշխատությունում («Հետազոտություն ազգերի հարստության բնույթի և պատճառների մասին») փորձեց հիմնավորել, ազատական շուկայական մոդելի (որը դարձավ *laissez-faire-ի* հիմքը) բարձր արդյունավետությունը, որն իրեն յուրահատուկ ինքնակարգավորման միջոցով խթանում է արտադրությունը և ապահովում տնտեսական առաջընթացը: Այս տնտեսական մոդելն ի հայտ եկավ որպես հակադրություն միապետությանը, ուստի, տրամաբանական էր, որ Ա.Սմիթը սահմանափակվեց պետության մի քանի գործառույթների նկարագրմամբ, այն է՝ երկրի անվտանգության ապահովում, արդարադատության հաստատում և հասարակական հարստությունների պահպանում:

19-րդ դարի կեսերին, երբ տնտեսական ճգնաժամերն ու սոցիալական լարվածությունն ավելի խորացան, առաջացավ պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացման անհրաժեշտություն: Այս ժամանակաշրջանում էր, որ Ջոն Ստյուարտ Միլը փորձեց հիմնավորել, որ ազատ մրցակցության համակարգը չի կարող ապահովել տնտեսական

բոլոր հիմնախնդիրների լուծումը, որովհետև գոյություն ունեն տնտեսական գործունեության այնպիսի ոլորտներ, որոնք չեն երաշխավորում անհատին ստանալու անհրաժեշտ շահույթ (Միլն առաջինն էր, ով նշում էր, որ կրթությունը շուկայի անգործության օրինակ է), ուստի, վերջինս կարևորում էր սոցիալական ապահովության և հարկման որոշակի սկզբունքների իրագործման անհրաժեշտությունը: Ջ.Միլը, կամա թե ակամա, քննարկում է շահերի փոխհարաբերության խնդիրը, ինչը չի կարող լուծում ստանալ չկարգավորվող շուկայական հարաբերությունների պայմաններում: Հետևաբար, ինչպես և իր ժամանակակիցները, վերջինս հստակ տեսնում էր տնտեսության կարգավորման գործում պետության կարևոր դերը, այսինքն՝ նրա միջամտության անհրաժեշտությունը: Ջ.Միլն առաջիններից էր, ով տարանջատեց տնտեսագիտության տեսությունը և տնտեսական քաղաքականությունը: Այնուամենայնիվ, տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունն առաջին անգամ համապարփակ ձևով հիմնավորեց Ջ.Մ. Քեյնսը: Նա ստեղծեց մի տեսություն, որն առանցքային նշանակություն ունեցավ 20-րդ դարի տնտեսագիտական մտքի զարգացման գործում: Այդ տեսությունն արմատապես տարբերվում է մինչ այդ գոյություն ունեցող բոլոր ուսմունքներից: Այսպես, «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» հիմնարար աշխատության մեջ Քեյնսը հենց սկզբից նշում է. «Ես կրեթեմ ապացույցներ, որ դասական տեսության դրույթները կիրառելի են ոչ թե ընդհանուր, այլ միայն մասնավոր դեպքերի համար, քանի որ այն տնտեսական իրավիճակը, որը դիտարկում է դասական տեսությունը, հանդիսանում է հավասարակշռության հնարավոր իրավիճակների միայն սահմանային դեպքը: Ավելին, այդ հատուկ դեպքին բնորոշ գծերը չեն համընկնում մեզ շրջապատող հասարակության տնտեսական ուրվագծին, ուստի դրանց քարոզումը մեզ սխալ ճանապարհով է տանում և, իրական կյանքում այդ տեսությունը կիրառելու փորձ կատարելիս, հանգեցնում է ճակատագրական հետևանքների» [16, էջ 16]: Այսպիսով, հակադրվելով դասական տնտեսագիտությանը՝ Քեյնսը ստեղծեց մի ուսմունք, որը վճռորոշ դեր ունեցավ ճգնաժամում հայտնված մի շարք տնտեսությունների «վերակենդանացման» գործում: Նշենք, որ Քեյնսի տեսական մտքերը գործնականում առաջին անգամ համակարգված ձևով կիրառեց ԱՄՆ նախագահ Ֆ.Ռուզվելտը երկիրը ճգնաժամից դուրս բերելու գործում: Այդ ժամանակաշրջանում, չնայած անձնական և տնտեսական ազատության ավանդական արժեքներին հավատարմությանը, ամերիկացիների մեծ մասը կոդմ էր տնտեսական կյանքին պետության միջամտության ակտիվացմանը, քանի որ դա համարվում էր բարեկեցության պետության կայացման առաջնային գործոն:

## **2. Տնտեսությանը պետության միջամտության սահմանները**

Կարևորելով տնտեսությանը պետության միջամտության հարցում զարգացած երկրների կուտակած հարուստ փորձը՝ ներկայացնենք, թե դրանք ինչպիսի զարգացում են ունեցել:

18-19-րդ դարերի նախաշեմին Անգլիայում, որտեղ առաջինը սկսվեց ժամանակակից ընկալմամբ տնտեսական աճը, տիրապետող էին պետական ծախսերի սահմանափակման վերաբերյալ պատկերացումները: Պետական ծախսերն էականորեն ավելանում էին միայն պատերազմների ժամանակ (դրանք իրենց զագաթնակետին հասան Նապոլեոնի արշավանքների ժամանակ)՝ ֆինանսավորվելով փոխառությունների հաշվին, իսկ պատերազմից հետո դրանք մարվում էին: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Անգլիայի ՀՆԱ-ում պետական ծախսերի մասնաբաժինը բավական երկար ժամանակ կայուն էր: Այսպես, մինչև նապոլեոնյան արշավանքներն այդ ցուցանիշը կազմում էր 11%, իսկ 1830-1840-ական թթ., երբ մարվել էր պատերազմի ժամանակ կուտակված պարտքը, այն ավելի ցածր էր, քան մինչև պատերազմը:

1870-ական թթ. այժմյան արդյունաբերապես զարգացած պետությունների ՀՆԱ-ում պետական ծախսերի մասնաբաժինը կազմում էր մոտավորապես 8%: ԱՄՆ-ում դրանք համեմատաբար ավելի ցածր էին, Արևմտյան Եվրոպայի որոշ երկրներում՝ բարձր: Ֆրանսիայում վերոհիշյալ ցուցանիշը, որը կազմում էր 12.6%, անսովոր բարձր էր համարվում: Բանն այն է, որ Գերմանիան և Ֆրանսիան, որոնք 19-րդ դարի երկրորդ կեսից մտան ժամանակակից տնտեսական աճի փուլ, ունեին պետության ազդեցությունն օգտագործելու ավելի մեծ հնարավորություններ, քանի որ, ի տարբերություն անգլոսաքսոնյան երկրների, այստեղ չէին իշխում հասարակության կյանքում պետության դերի սահմանափակման մասին պատկերացումները: Ավելին, երբ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին զարգացած պետությունների մեծամասնությունում վերացվեց սեփականության իրավունքի սահմանափակումը և տղամարդկանց ընտրության իրավունքը դարձավ համընդհանուր, փոխվեց պետության օպտիմալ չափի վերաբերյալ որոշումների կայացման գործում ուժերի հարաբերակցությունը: Նույնիսկ Անգլիայում նոր գաղափարական ուղղություններն ունեցան իրենց ազդեցությունը. պետական ծախսերը կարող են ավելանալ՝ կապված պետության կողմից լրացուցիչ գործառույթների իրականացման հետ: Այսպես, եթե Անգլիայի կառավարության 1880-1885թթ. ղեկավար Ու.Գլադստոնը համոզված էր, որ պետական ծախսերը պետք է կրճատել, ապա 1916-1922թթ. վարչապետ Դ.Լլոյդ-Ջորջը հայտարարում էր, որ իր կառավարության օրոք ոչ մի հարկատեսակ չի վերացվելու: Այսպիսով, ազատական

գաղափարախոսության հայրենիքը համարվող Անգլիայում ևս պետության դերի վերաբերյալ պատկերացումները կտրուկ փոխվեցին [17, շ. 5-9]: Հատկանշական է այն, որ եթե նախկինում (ավելի քան երկու դար) անգլիական հասարակական միտքն էր տարածվում դեպի արևելք, ապա 1870-ական թթ. սկսած՝ արևելքից գաղափարները (ընդ որում, բավական հին) սկսեցին թափանցել դեպի արևմուտք: Անգլիան դադարեց լինել Եվրոպայի քաղաքական և հասարակական կյանքում ինտելեկտուալ առաջնորդ և վերածվեց գաղափարներ ներմուծողի՝ իր դերը զիջելով Գերմանիային: Իհարկե, այդ գաղափարների մեծ մասը, այդ թվում նաև սոցիալիզմը, ըստ Ֆ.Հայեկի, չծնվելով Գերմանիայում, մշակվեց այնտեղ և զարգացման գագաթնակետին հասավ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին քառորդին: Դեռևս ֆաշիզմի հաստատումից առաջ գերմանացիները համաեվրոպական արժեքներն անվանում էին արևմտյան (հասկանալով Հռենոսից դեպի արևմուտք) և, համոզված լինելով, որ այդ արժեքները ստեղծված են Անգլիայի գերիշխող դիրքն ամրապնդելու համար, գտնում էին, որ անգլիական և ամերիկյան քաղաքական մտքերը հնացած են, և դրանցից պետք է ամաչել [18, շ. 15, 16]:

Երբ պետության դերի նկատմամբ վերաբերմունքը փոխվեց նաև ԱՄՆ-ում, որը համարվում էր ազատական արժեքները պահպանող «հիմնապունը», կարելի է ասել, որ ուժեղ պետության գաղափարը կրեց համատարած բնույթ: Հետաքրքիրն այն է, որ ԱՄՆ-ը որպես պետություն ձևավորվել է հարկատուների հեղափոխության արդյունքում, որոնք պայքարում էին հարկերի սահմանման գործընթացի վրա ազդեցություն ունենալու համար: Այստեղ, ավելի քան Անգլիայում, համոզված էին, որ պետության դերը պետք է սահմանափակվի: Սակայն ԱՄՆ-ում ցածր եկամուտ ունեցող խավերի ընտրության իրավունքի ընդունումը, ինչպես նշում է Ա. դե Տոկվիլը, ճանապարհ բացեց պետության վերաբաշխման գործառույթների ընդլայնման համար, և ավելացավ հարկային բեռը [19, շ. 191, 192]: Վերջինիս համար առիթ հանդիսացավ նաև ռազմական նավատորմի ստեղծման խոշորամասշտաբ ծրագիրը, որը պահանջում էր պետական մեծ ներդրումներ: Այսպես, արդեն 19-րդ դարի վերջին Ամերիկայում գերիշխող էր այն կարծիքը, որ տնտեսական զարգացմանը և արտադրության ծավալների աճին զուգընթաց՝ պետական ծախսերը պետք է աճեն, սակայն այդ աճի տեմպը պետք է հավասար լինի տնտեսական աճի տեմպին: Միննույն ժամանակ, Եվրոպայում ձևավորվում էր այլ համոզմունք, ըստ որի, պետական ծախսերն ունեն հասարակական արտադրությունից ավելի արագ աճելու միտում: Այս տեսակետի (որը հայտնի էր «Վագների օրենք» անվամբ) հեղինակը գերմանացի տնտեսագետ Ա.Վագներն էր, ով փորձում էր

ապացուցել, որ, պետական ծախսերի ավելացումը կախված չէ հասարակության սոցիալական և քաղաքական բնույթից. այն պայմանավորող հիմնական գործոնը ժամանակակից ինդուստրիալ տնտեսությունն է: Սակայն, հակառակ Վազների կանխատեսումներին, մինչև Առաջին համաշխարհային պատերազմը տնտեսապես զարգացած երկրներում, որտեղ շատերը դեռևս կարծում էին, թե ազգային եկամտի 10%-ից ավելին պետությանը տրամադրելը վտանգավոր է զարգացման համար, ՀՆԱ-ում պետական ծախսերի մասնաբաժնի էական ավելացում տեղի չունեցավ: Իրավիճակը կտրուկ փոխվեց 1914-ից հետո, երբ ռազմական ծախսերը հոգալու համար պատերազմող երկրները ստիպված էին մեծացնել հարկային բեռը, սակայն պետք է նշել, որ զարգացած երկրներում բնակչության կենսամակարդակն այնքան բարձր էր, որ վերջիններս այդ պայմաններում ևս կարողանում էին ապահովել նվազագույն կենսամակարդակ: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ԱՄՆ-ում և Անգլիայում վերսկսվեցին ռազմական հարկերի նպատակահարմարության շուրջ քննարկումները, սակայն դրանք լուրջ փոփոխությունների չբերեցին, ավելին, 1920-1930-ական թթ. սոցիալ-տնտեսական ցնցումները, իսկ հետագայում նաև Երկրորդ համաշխարհային պատերազմն էլ ավելի ամրապնդեցին պետության միջամտության անհրաժեշտությունը: Այսպիսով, ԱՄՆ նկրտումները՝ ստեղծել ազատական արժեքների վրա հիմնված համաշխարհային համակարգ, ի չիք դարձան, քանի որ ազատական պետության արդյունավետությունն ապացուցելու համար բավարար հիմքեր չկային: Ավելին, չնայած Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տասնամյակներ շարունակվող ճգնաժամերին՝ տնտեսական պատմությամբ զբաղվող շատ գիտնականների կարծիքով, հետպատերազմյան 25 տարիների ընթացքում առաջատար կապիտալիստական երկրները հասել են իրենց պատմության ընթացքում աննախադեպ արդյունքների: Այդ պատճառով էլ 1950-1973թթ. ընկած ժամանակահատվածն անվանում են կապիտալիզմի «ոսկե դար»:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ վերը նշված պատմական իրողությունները բերեցին այնպիսի գաղափարական շրջադարձի, որի արդյունքում նվազագույն պետության գաղափարին փոխարինելու եկան հարկային բեռի վերին սահմանների մասին պատկերացումները: Սրանց տարբերությունն այն է, որ եթե նվազագույն պետության սկզբունքը հստակ համոզմունքն է այն բանի, որ մարդիկ ավելի լավ են տնօրինում իրենց միջոցները, քան պետությունը, ապա հարկման վերին սահմանի գոյությունն ընդամենը տեսական դրույթ է, որն ունի յուրաքանչյուր երկրում գործնականորեն ապացուցվելու կարիք:

Այսպիսով, կարելի է փաստել, որ 1914-1980-ական թթ. պետության



ակտիվացման ժամանակահատված էր, որի ընթացքում ավելացան պետության սոցիալական պարտականությունները և դրվեց ժամանակակից հարկային համակարգի հիմքը: Այս ընթացքում, քանի դեռ տնտեսական աճի տեմպը բարձր էր, իսկ ինֆլյացիայինը՝ ցածր (ինչը հատկապես բնորոշ էր 1950-1960-ական թթ.), հարկային բեռի ավելացումը հասարակության կողմից նորմալ էր ընդունվում: Մակայն, երբ պետության ծախսերը գերազանցեցին դրանք ֆինանսավորելու կառավարության հնարավորությունները, չափից ավելի մեծացան պետական պարտքերն ու բյուջեի դեֆիցիտները, ուժեղ պետության նկատմամբ վստահությունն աստիճանաբար նվազեց: 1970-ական թթ. վերջերից սկսած՝ Եվրոպայում բարեկեցության պետության քննադատները սկսեցին լսելի դառնալ, և պետության «գերծանրաբեռնված» լինելու տեսակետն ընդունեց համատարած բնույթ: Մակայն այդ շրջանի շատ վերլուծություններում տնտեսության մեջ պետության դերը նույնացվում էր բարեկեցության պետություն հասկացության հետ: Վերջիններս տարբերակվեցին միայն 1980-ականներին. 1988թ. Ֆրանսիայում ընդունվեց օրենք նվազագույն եկամտի մասին (*revenu minimum d'insertion*), որն ապահովում էր քաղաքացիների բարեկեցության որոշակի նվազագույն սահման, և վերջինս ոչ մի կապ չունեւր տնտեսությանը պետության միջամտության աստիճանի հետ [20, p. 9]: Այսպիսով, 1980-ական թթ. սկզբին, երբ ակնհայտ դարձավ, որ շուկայական տնտեսությունում պետական միջամտությունն ունի իր սահմանը, որտեղ այն ապահովում է առավելագույն արդյունավետություն, աստիճանաբար առավելություն ստացան այն տեսությունները, որոնք կոդմ էին պետության միջամտության սահմանափակմանը: Մակայն մինչ այդ էլ որոշ տնտեսագետներ հարում էին այն մտքին, որ տնտեսությանը պետության միջամտությունը միշտ չէ, որ դրական հետևանքների է հանգեցնում: Այսպես, դեռևս Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ տիրապետող էր «ուժեղ պետության» գաղափարը, հունգարացի տնտեսագետ Պիտեր Բաուերը պաշտպանում էր հակառակ տեսակետը, ըստ որի, կենտրոնացված պլանավորումը, հովանավորչությունը (պրոտեկցիոնիզմը) և արտասահմանյան օգնությունը տնտեսական առաջընթացի լուրջ խոչընդոտներ են: Մալայզիայում, Արևմտյան Աֆրիկայում և Հնդկաստանում կատարած նրա հետազոտություններն ապացուցում էին, որ պետության դերի սահմանափակումը և տնտեսական ազատությունը անհատի բարեկեցության անհրաժեշտ նախապայմաններ են: Բաուերը խիստ քննադատության ենթարկեց հատկապես մասնագետների շրջանում տարածված այն տեսակետը, ըստ որի, աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ են խոշորամասշտաբ պետական ներդրումներ: Վերջինս ընդգծում էր, որ այնպիսի գործոններ, ինչպիսիք են քաղաքական ուժերի գոր-

ծողությունները, աշխատուժի որակավորվածությունը, ազգային մտածելակերպը, ինչպես նաև փոխլրացնող ռեսուրսների առկայությունը, հաճախ շատ ավելի կարևոր են:

Նույն տեսակետն էր պաշտպանում նաև Գերմանիայի «բարեփոխումների հայրը» համարվող կառավարման համակարգի հայտնի մասնագետ Լյուդվիգ Էրհարդը: Վերջինս նշում էր, որ պետության խնդիրների մեջ չպետք է մտնի տնտեսության գործերի մեջ անմիջականորեն խառնվելը, համենայնդեպս՝ այնքան ժամանակ, քանի դեռ տնտեսությունն ինքը այդ չի պահանջում:

Իհարկե, Բաուերով և Էրհարդով ազատական տնտեսության կողմնակիցների թիվը չի սահմանափակվում: Որպես օրինակ կարելի է նշել ավստրիական (Կ. Մենգեր, Ֆ. ֆոն Բեմ-Բավերկ, Ֆ. ֆոն Վիգեր, Լ. ֆոն Միգես, Ֆ. ֆոն Հայել, Գ. Հաբերլեր), Չիկագոյի (Ֆ. Նայթ, Ջ. Վիներ, Հ. Սայմոնս, Մ. Ֆրիդմեն, Ջ. Ստիգլեր, Ռ. Բոուզ, Ջ. Բյուքենեն, Ա. Ալչիան, Ա. Հարբերգեր) և ֆրայբուրգյան (Ա. Ռյուստով, Վ. Ռեպկե, Վ. Օյքեն, Լ. Էրհարդ) դպրոցների ներկայացուցիչներին, ովքեր մշակելով արժեքի, աշխատանքի, կապիտալի, փողի, տոկոսի, տնտեսության պետական կարգավորման և բազմաթիվ այլ տեսություններ՝ փաստորեն, դրեցին ժամանակակից տնտեսագիտության հիմքը:

Այժմ ևս բազմաթիվ տնտեսագետներ արտահայտվում են «մեծ» կամ «ուժեղ» պետության դեմ: Մասնավորապես, Կատոնի ինստիտուտի փոխնախագահ Դեյվիդ Բոուզն իր հոդվածներից մեկում անդրադառնալով «Կատրինա» փոթորկի պատճառած վնասներին՝ նշում է, որ «մեծ պետությունը» ցուցադրում է իր ձախողումը: Նրա կարծիքով՝ այն պետական կառույցները, որոնք պատասխանատու էին աղետի հետևանքների վերացման համար, ձախողեցին իրենց աշխատանքը, և փաստորեն ԱՄՆ-ի պես պետությունն ի վիճակի չեղավ կատարել իր ամենագլխավոր գործառույթը՝ իր քաղաքացիների կյանքի և գույքի պաշտպանությունը: Փոխարենը, մի շարք մասնավոր ընկերություններ հսկայական օգնություններ (խոսքն այստեղ չի վերաբերում զուտ մարդասիրական բնույթ ունեցող օգնություններին) տրամադրեցին տուժածներին, քանի որ վերջիններս իրենց սպառողներն էին և նրանց վիճակի լավացումը բխում էր այդ ընկերությունների շահերից: Ավելին, *Wal-Mart* խանութների ցանցը նախապես գնել էր 10000 կոնտեյներ ջուր՝ փոթորկի ժամանակ վաճառելու նպատակով: Ի հակադրություն դրա՝ Լուիզիանայի նահանգը, որն ամենաշատ միջոցներն է ստանում քաղաքացիական ծրագրերի համար, բոլորովին անպատրաստ էր աղետին: Սակայն ամենասարսափելին այն էր, որ աղետից հետո հստակ երևաց, թե մարդիկ (հատկապես աղքատ բնակչությունը) ինչպիսի կախվածության մեջ են գտնվում պետությունից: Վերջինս ի վիճակի չէր ապահովել

իր քաղաքացիների անվտանգությունը, և բնակչությունը հայտնվել էր լրիվ անօգնական վիճակում: Փաստորեն, «սոցիալական պետությունը» մարդկանց զրկել է ինքնուրույնության և սեփական կյանքի նկատմամբ պատասխանատվության զգացումից և սովորեցրել նրանց, որ ամեն ինչում պետք է ապավինել պետությանը [21]:

Վերջին շրջանում ազատական արժեքների «վերածնունդը» սկսվել է 1990-ական թթ. կեսերից, երբ ԱՄՆ-ում այդ արժեքների կիրառումը բերեց լուրջ հաջողությունների: ԱՄՆ կառավարությունն ազատական քաղաքականությունը որդեգրել էր դեռևս 1970-ականների վերջերից՝ նախագահ Ջ.Քարթերի կառավարման երկրորդ ժամկետից սկսած: Հետագայում, չնայած իր նախընտրական խոստումներին՝ մեծացնել տնտեսությանը պետական միջամտության աստիճանը, նախագահ Բիլ Բլինթոնը (սկսած 1992-ից) և նախապատվությունը տվեց ազատական տնտեսական քաղաքականությանը:

Այսպիսով, ակնհայտ է, որ վերոհիշյալ տնտեսագիտական ուղղությունը մեծ դեր ունի որևէ երկրի տնտեսական քաղաքականության, մասնավորապես՝ տնտեսությանը պետության միջամտության սահմանների որոշման գործում, ուստի, հարկ ենք համարում ներկայացնել դրա հիմնական բովանդակությունը:

Պետությունը... բարոյական ամբողջականություն է, ազատության իրականացում, և բանականության բացարձակ նպատակն այն է, որ իրոք լինի ազատություն: Հեգելի՝ պետության մասին ունեցած այս պատկերացումն առաջին հայացքից, կարծես, լրիվ համապատասխանում է ազատական մտածողությանը: Մակայն խնդիրն այն է, որ ազատության իրականացումը կարելի է մեկնաբանել տարբեր կերպ: Չխորանալով այս փիլիսոփայական հասկացության մեկնաբանման մեջ՝ այնուամենայնիվ, նշենք, որ ազատական պետության կողմնակիցներն ազատության իրականացում ասելով հասկանում են անհատի ազատության առաջնայնությունը, իսկ վերջինիս իրականացումն անհնար է առանց որոշակի նյութական միջոցների տիրապետելու: Այս առումով Հիլարի Բելոկը նշում է, որ նյութական բարիքների արտադրության նկատմամբ վերահսկողությունը նույնն է, ինչ վերահսկողությունը մարդկային կյանքերի նկատմամբ: Վերջինս գտնում էր նաև, որ կապիտալիստական հասարակության վրա սոցիալիստական ուսմունքի ազդեցությունը եղել է այն, որ առաջացել է մի նորագոյացություն, որը Բելոկն անվանում է «համընդհանուր ստրկացման պետություն» [22, p. 14]:

Երբեմն ազատական պետություն հասկացությունն առաջացնում է որոշակի թյուրըմբռնում այն իմաստով, որ շատերը կարծում են, թե վերջինս չգործող (ոչնչի չմիջամտող) պետությունն է: Իհարկե, սա ճիշտ տեսակետ չէ. ցանկացած պետություն պետք է գործի, այսինքն՝ միջամտի

ինչ-որ բանի: Խնդիրն այն է, թե որքանով է այդ միջամտությունը կանխատեսելի անհատի կողմից: Երբ վերջինս գիտի, թե ինչքանով է նա պաշտպանված կողմնակի միջամտությունից և պետությունը որ դեպքերում կարող է ազդել իր որոշումների վրա, կարող է ազատ կառուցել իր ծրագրերը: Ցանկացած հասարակությունում միշտ էլ գոյություն ունեն այնպիսի պետական գործառույթներ, որոնք միանշանակ դրական են ընդունվում քաղաքացիների կողմից, սակայն կան նաև այնպիսիք, որոնց վերաբերյալ հասարակական համաձայնություն չի կայանում: Փաստորեն, երբ պետությունն այդպիսի ոլորտներում (որտեղ չկա հասարակական համաձայնություն) իրականացնում է ուղղակի կառավարում, այն բերում է անձնական ազատությունների ճնշման: Բացի այդ, երբ հանրային հատվածը, որտեղ պետությունն իրականացնում է միջոցների բաշխման և օգտագործման կառավարում, գերազանցում է որոշակի չափը, նրա գործունեությունն անդրադառնում է ամբողջ համակարգի վրա: Եթե նույնիսկ պետությունն անմիջականորեն կառավարում է ռեսուրսների միայն մի մասը, նրա կողմից ընդունված որոշումներն անուղղակիորեն ազդում են ողջ տնտեսության վրա: Այսպիսով, որքան շատ ռեսուրսների է տիրապետում պետությունը, այնքան ավելի անկանխատեսելի են նրա գործողությունները և սահմանափակ՝ անհատի ազատությունը<sup>1</sup>: Դեռևս 19-րդ դարի կեսերին Ֆ. Բաստիան կանխատեսում էր, որ պետությունն աստիճանաբար ընդլայնելով իր գործունեությունը՝ կհասնի այնպիսի մասշտաբների, որ ազգային եկամտի կեսին տիրապետելը կդիտվի նորմալ, սակայն դա չի բերի ազգաբնակչության կենսամակարդակի բարելավման, այլ կստեղծվեն բազմաթիվ անօգուտ պետական կառույցներ, որոնք պետք է որոշումներ կայացնեն մարդկանց փոխարեն: Ուստի, պետք է հստակ սահմանափակել պետության գործունեության շրջանակները, հակառակ դեպքում՝ հասարակությունը կկորցնի անձնական նախաձեռնության (ձեռներեցության) ունակությունը, դրա հետ մեկտեղ՝ հարստությունը, բարեկեցությունը, անկախությունը և սեփական արժանապատվության գիտակցությունը:

Պետական միջամտության գնահատման կարևորագույն ցուցանիշներից է ՀՆԱ-ում պետական ծախսերի մակարդակը, որը յուրաքանչյուր երկրի համար առանձնահատուկ է և կախված է դրա զարգացման փուլից:

<sup>1</sup> Ինչպես իրավացիորեն նշում է Ե. Գայդարը, «սոցիալիստական տնտեսական համակարգի կատարելագործման բանավեճերն ընթանում էին 1960-ական թթ. սկզբից: Մինչև 1980-ական թթ. այն արմատապես վերափոխելուն ուղղված քայլերը քաղաքական պատճառներով արգելված էին: «Շուկայական տնտեսություն» բառակապակցությունը, նույնիսկ ԽՍՀՄ-ի համար կիրառելի, սոցիալիստական բաց մասնուլում չէր նշվում: «Ռեֆորմ» բառը 1970-ական թթ. սկզբից առաջին անգամ օգտագործվում է բաց փաստաթղթում 1986թ.՝ ԽՄԿԿ Կենտկոմի XXVII համագումարում հնչած Մ. Գորբաչովի ելույթում, ըստ որում, ծայրահեղ զգուշավորությամբ» [23, c. 273]:

Այս առումով, կարևոր ենք համարում Ջ.Գորթնիի կողմից կատարված վերլուծությունը, որը վերջին տարիներին մեծ արձագանք է գտել գիտական աշխարհում [24]: Դրանում, մասնավորապես, ցույց է տրվում որոշակի շեմից հետո համախառն պետական ծախսերի և ՀՆԱ աճի միջև գոյություն ունեցող հակադարձ կախվածությունը (ՀՆԱ-ում պետական ծախսերի ավելացումը 10%-ով բերում է ՀՆԱ աճի 1%-ով նվազման), որը ստացվել է ՏՀԶԿ անդամ 23 երկրների 1960–1996թթ. համանուն ցուցանիշների ուսումնասիրության հիման վրա (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Համախառն պետական ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին ՏՀԶԿ անդամ երկրներում, 1960-1996 թթ., % [25]

Երկրները	1960	1970	1980	1990	1996	Աճը 1960-1996թթ. ընթացքում
1	2	3	4	5	6	7
Ավստրիա	21.2	25.5	34.0	37.7	37.5	16.3
Ավստրալիա	35.7	39.2	48.9	49.3	52.7	17.0
Բելգիա	34.5	36.5	50.7	54.6	54.5	20.0
Կանադա	28.6	35.7	40.5	47.8	46.4	17.8
Դանիա	24.8	40.2	56.2	58.6	60.8	36.0
Ֆինլանդիա	26.6	31.3	36.6	46.8	59.4	32.8
Ֆրանսիա	34.6	38.9	46.1	49.9	54.7	20.1
Գերմանիա	32.4	38.6	48.3	45.7	56.0	23.6
Հունաստան	17.4	22.4	30.5	49.6	49.4	32.0
Իսլանդիա	28.2	29.6	32.2	39.9	37.3	9.1
Իռլանդիա	28.0	39.6	50.8	40.9	37.7	9.7
Իտալիա	30.1	34.2	41.9	53.8	52.7	22.6
Ճապոնիա	17.5	19.3	32.6	31.9	36.9	19.4
Լյուքսեմբուրգ	30.5	33.1	54.8	45.5	58.1	24.4
Նիդեռլանդներ	33.7	46.0	57.5	57.5	58.1	24.4
Նոր Զելանդիա	27.7	34.4	47.0	50.0	42.3	14.6
Նորվեգիա	29.9	41.0	48.3	51.3	46.4	16.5
Պորտուգալիա	17.0	21.6	25.9	41.9	46.0	29.0
Իսպանիա	13.7	22.2	32.9	43.0	45.4	31.7
Շվեդիա	31.0	43.7	61.6	60.8	66.1	35.1
Շվեյցարիա	17.2	21.3	29.3	30.9	36.9	19.7
Մեծ Բրիտանիա	32.2	39.2	44.9	42.3	43.7	11.5
ԱՄՆ	28.4	32.5	33.7	34.8	34.6	6.2
Նշված երկրների միջինը	27.0	33.3	42.8	46.3	48.0	21.0

Ըստ այդմ էլ, Ջ.Գորթնին, Ռ.Հոլքոմբը և Ռ.Լոուսոնը պնդում են, որ պետությունը պետք է զբաղվի իր համար հիմնական համարվող գործառնությունների իրականացմամբ, որոնց համար պահանջվում է ոչ ավելի, քան ՀՆԱ 15%-ը: Միաժամանակ պետք է նշել, որ պետության համար գլխավոր համարվող գործառնությունների հարցում միանշանակ մոտեցում գոյություն չունի, սակայն բոլորի կողմից քիչ թե շատ ընդունելի է այդ գործառնությունները երկու մեծ խմբով ներկայացնելը: Առաջինը ներառում է գործունեության այնպիսի տեսակներ, որոնք ուղղված են անձի և նրա սեփականության պաշտպանությանը բնությունից, կողոպուտից, գողությունից և այլն, իսկ երկրորդը ենթադրում է քաղաքացիներին որոշակի սահմանափակ թվով բարիքների տրամադրում: Բարիքներ, որոնց արտադրությունն այս կամ այն պատճառով շուկայի համար դժվար է կազմակերպել: Կարելի է ասել, որ սեփականության իրավունքի պաշտպանությունը, պայմանագրերի կատարման հարկադրումը և կոնֆլիկտների լուծումը դատարանների միջոցով դնում են շուկայական տնտեսության անխափան գործունեության հիմքը: Մյուս կողմից՝ տնտեսական աճին նպաստում է նաև պետության կողմից այնպիսի հանրային բարիքների տրամադրումը, ինչպիսիք են ճանապարհները, ազգային անվտանգությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, ջրմուղ-կոյուղու համակարգը և այլն: Թեև պետությունն ունի համեմատական առավելություն իրավական ինստիտուտներով և ենթակառուցվածքային օբյեկտներով ապահովելու գործում, այդ ոլորտներում բացառված չէ նաև մասնավոր ընկերությունների գործունեությունը: Օրինակ՝ ԱՄՆ-ում ներկայումս գործող այն մասնավոր կառույցները, որոնք կատարում են ոստիկանական գործառնություններ և անվտանգության մասնավոր ծառայություններ, իրենց զբաղվածների թվով գերազանցում են համանման պետական կառույցներին: Մեծ կիրառություն ունեն նաև միջնորդ դատարանները (արբիտրաժ)՝ չնայած պետական դատարանների հասանելիությանը: Հաշվի առնելով այս ամենը՝ նորագույն ժամանակների համար կարելի է սահմանել պետության հետևյալ ոլորտները. հասարակական կարգի և անվտանգության ապահովում, կրթություն, տրանսպորտ և կապ, ազգային անվտանգություն: Այս ոլորտներում պետության գործառնություններին որոշ հեղինակներ ավելացնում են նաև կենտրոնական բանկի գործունեությունը, կոյուղագծերի շահագործումը և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Պետության գործառնությունների բաժանումը հիմնականի և ոչ հիմնականի կարևոր է այնքանով, որ երբ պետությունը հեռանում է իր հիմնական (գլխավոր) գործառնություններից, նրա գործունեության մեջ սկսում են մեծ տեղ

գրավել տնտեսության կարգավորումն ու եկամուտների վերաբաշխումը, ինչն աստիճանաբար ռեսուրսները տեղափոխում է նոր արդյունք ստեղծող ոլորտներից դեպի վերջիններիս վերաբաշխումն իրականացնող ոլորտներ: Ռեսուրսների այսպիսի կառուցվածքային փոփոխությունը դանդաղեցնում է տնտեսական աճը և բերում նրան, որ տնտեսության բոլոր սուբյեկտների եկամուտների մակարդակը դառնում է ավելի ցածր, քան կարող էր լինել տնտեսության պոտենցիալի ավելի «ազատական» օգտագործման դեպքում: Տնտեսական այսպիսի իրադրությունում (որը հայտնի է «ռենտայի փնտրում» անվամբ), մարդիկ ոչ թե ձգտում են զբաղվել արտադրվող ապրանքների և ծառայությունների փոխանակությամբ, այլ՝ ներգրավվել այնպիսի պետական կառույցներում, որոնք տիրապետում են ստեղծված արդյունքների վերաբաշխման լծակների [26]:

### **3. Պետության դերն անցումային տնտեսությամբ երկրներում**

Նախկին Խորհրդային Միության կազմալուծումից հետո նախկին համայնավարական երկրներում շուկայական վերափոխումների ընթացքում ձևավորվել են սեփականության տարբեր ձևեր, վերացվել է պետական սեփականության մենաշնորհը, և դրվել են խառը տնտեսության հիմքերը պետական հատվածի տեսակարար կշռի էական նվազման պայմաններում: Այդպիսի վերափոխումը դժվար և հակասական գործընթաց է, բայց, միևնույն ժամանակ, այն սկզբունքորեն նոր չէ համաշխարհային պրակտիկայում: Փորձը ցույց է տվել, որ շուկայական երկրների տնտեսական համակարգերի բոլոր առանձնահատկությունների և տարբերությունների պայմաններում մասնավոր սեփականության բաժնի գերակայությունը պետականի նկատմամբ ընդհանուր սկզբունք է: Առանձին երկրներում պետական սեփականության բաժինը տատանվում է 20-40%-ի և ավելի սահմաններում: Շվեդիայում, օրինակ, այն կազմում է մոտ 60%: Առավել լայն իմաստով, դա շուկայական տնտեսությունում պետության դերի մասին հարցն է, քանի որ պետության գործունեության համակարգը և մեխանիզմները կախված են հիմնականում հասարակությունում ձևավորված սեփականության հարաբերություններից: Սեփականության ինստիտուտն այժմ էլ հանդիսանում է ժամանակակից շուկայական հարաբերությունների ձևավորման հիմքը:

Սոցիալիստական համակարգի փլուզումից հետո հետհամայնավարական երկրներն անցումը շուկային իրականացրին՝ ունենալով տարբեր ելակետային դիրքեր, սակայն դրանց մեծ մասում շուկայական վերափոխումները սկսվեցին սեփականության հարաբերությունների բարեփոխումներով և համապատասխան ինստիտուտների կայացմամբ: Անցումային

տնտեսությամբ բոլոր երկրներն այս կամ այն չափով «բախվել» են սեփականության ինստիտուտի կայացման (կամ վերականգնման) հիմնախնդրին, առանց որի պարզապես անհնար է շուկայական տնտեսության գործունեությունը: Ընդ որում, այս վերափոխումների ծավալները և արագությունը կախված էին ամենից առաջ երկրի քաղաքական ղեկավարության կամքից, իսկ վերափոխումների հաջողությունը՝ սեփականության բոլոր տեսակների զարգացման նախադրյալների ստեղծման և դրանց արդյունավետ գործունեության ապահովման ընդունակությունից [27]:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների համար այդ գործընթացը վերադարձ էր այն համակարգին, որն այդ երկրներում գոյություն ուներ ոչ վաղ անցյալում, հետևաբար այն պահպանվել է ապրող սերունդների հիշողության մեջ, մինչդեռ հետխորհրդային երկրների համար դա այն ինստիտուտների վերականգնումն է, որոնք տոտալիտար համակարգի պայմաններում գրեթե ամբողջությամբ ջնջվել էին մարդկանց հիշողությունից:

Հայաստանը հետհամայնավարական տարածքում առաջիններից էր, որ սկսեց պետական սեփականության վերափոխումները: Սեփականության ապապետականացումը և մասնավորեցումը (սկզբնապես՝ սեփականաշնորհում) դարձան սեփականության իրավունքի ձևավորման, զարգացման և կայացման հիմքը, արտադրության միջոցների, այդ թվում՝ հողի նկատմամբ մասնավոր սեփականատիրական հարաբերությունների կառուցման հիմնական միջոցը [28, էջ 10]: Այդ բարեփոխումների արդյունքում տարեցտարի մեծացավ ՀՆԱ-ում մասնավոր հատվածի տեսակարար կշիռը՝ 2005թ. կազմելով ավելի քան 80% [29]:

Անցումային տնտեսությամբ երկրներում պետության հիմնական գործառույթը դարձավ տնտեսական համակարգի վերափոխման (տրանսֆորմացման) ապահովումը, որն արտահայտվում է բարեփոխումների բազմաթիվ ուղղություններում: Չնայած այդպիսի վերափոխումների ընդհանուր ձևերին և եղանակներին՝ առանձին երկրներում դրանք ունեցել են տարբեր արդյունքներ, ինչը պայմանավորված է պետության ղեկի մոտ կանգնած բարեփոխիչների աշխատանքի արդյունավետությամբ:

Համեմատության համար բերենք Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից նախկին համայնավարական երկրներում իրականացված հետազոտության արդյունքները, որը պարունակում է տնտեսության անցումային փուլը բնութագրող մի շարք ցուցանիշներ (տե՛ս *Աղյուսակ 3*):



Աղյուսակ 3

Նախկին համայնավարական երկրներում  
անցումային գործընթացի ցուցանիշները 2005թ. դրությամբ [30, p. 4]

Երկիրը			Զեռնարկությունները			Արտաքին առևտուրը և շուկաները			Ֆինանսական ինստիտուտները		Են- թա- կա- ույց- վածք
	Բնակչությունը 2005թ. Վեպին (վկ)	Մասնավոր հատվածի բաժնիք շՆԱ-ում 2005թ. Վեպին (ԿԳԾԵԲ)	Խոշոր ձեռնարկությունների մասնավորեցում	Փոքր ձեռնարկությունների մասնավորեցում	Ձեռնարկությունների կառավարում և կառուցվածքային բարեփոխումներ	Գճերի ազատախառնեցում	Արտաքին առևտուր և արժույթային փոխարժեքի համակարգ	Մրցակցային քաղաքականություն	Բանկային բարեփոխումներ և տոկոսադրույքի ազատախառնեցում	Արժույթային քաղաքականության փոփոխություններ	Ենթակառուցվածքային
Ադրբեջան	8,3	60	2	4-	2+	4	4↑	2	2+	2-	2
Ալբանիա	3,2	75	3	4	2	4+	4+	2	3-	2-	2
Հայաստան	3,2	75	4-↑	4	2+	4+	4+	2+↑	3-↑	2	2+
Բելառուս	9,8	25	1	2+	1	3-	2+	2	2-	2	1+
Բուլղարիա	7,8	75	4	4-	3-	4+	4+	3-↑	4-	2+	3
Բոսնիա-Չերցեգովինա	3,8	55↑	3-↑	3	2	4	4-	1	3-	2-	2+
Մակեդոնիա	2,0	65	3+	4	2+	4	4+	2	3-	2	2
Հունգարիա	10,	80	4	4+	4-↑	4+	4+	3	4	4↑	4-
Վրաստան	4,6	65	4-↑	4	2+↑	4+	4+	2	3-	2-	2+
Ղազախստան	15,	65	3	4	2	4	3+	2	3	2+	2+
Ղրղզստան	5,1	75	4-	4	2	4+	4+	2	2+	2	2-
Լատվիա	2,3	70	4-	4+	3	4+	4+	3-	4-	3	3
Լիտվա	3,4	75	4↑	4+	3	4+	4+	3	4-↑	3	3-
Սլովակիա	3,4	60↑	3	3+	2↑	4-	4+	2	3-	2	2+↑
Լեհաստան	38,	75	3+	4+	4-↑	4+	4+	3	4-↑	4-	3+
Ռուսաստան	14	65↓	3↓	4	2+	4	3+	2+	2+↑	3-	3-
Ռումինիա	21,	70	4-	4-	2+↑	4+	4+	2+	3	2	3+
Սերբիա և Չեռնոգորիա											
Սլովակիա	5,4	80	4	4+	4-↑	4+	4+	3	4-	3-	3-
Սլովենիա	2,0	65	3	4+	3	4	4+	3-	3+	3-	3
Տաջիկստան	6,5	50	2+	4↑	2-	4-	3+	2-	2	1	1+
Թուրքմենստան	6,5	25	1	2	1	3-	1	1	1	1	1
Ուզբեկստան	26,	45	3-	3	2-	3-	2↑	2-	2-	2	2-
Ուկրաինա	47,	65	3	4	2	4	3+↑	2+	3-↑	2+	2
Խորվաթիա	4,4	60	3+	4+	3	4	4+	2+	4	3-	3
Չեխիայի Հանրապ.											
Էստոնիա	1,4	80	4	4+	4-↑	4+	4+	3-	4	3+	3+

Օսանթագրություն: Գնահատման ցուցանիշները տրված են 5 բալային սանդղակի համակարգով, որտեղ 1-ը գործնականում համապատասխանում է կենտրոնացված պլանային տնտեսությունից որևէ հեռացման իսպառ բացակայությանը, իսկ 4+ նշանակում է շուկայական տնտեսության ստանդարտների ձեռքբերում, որոնք բնորոշ են արդյունաբերական զարգացած երկրներին:

ՇՆԱ-ում մասնավոր հատվածի բաժնիք հաշվարկվել է պաշտոնական (պետական) և ոչ պաշտոնական աղբյուրներից ստացված վիճակագրական տվյալներով: Այդ բաժնի մեջ մտնում է գրանցված մասնավոր ընկերությունների պաշտոնապես հաշվառվող գործունեությունից ստացվող եկամուտը, ինչպես նաև պաշտոնապես չհաշվառվող գործունեությունից ստացվող եկամուտը՝ դրա մասին հուսալի տեղեկությունների առկայության դեպքում: Մասնավոր ընկերություններ ասելով՝ այստեղ հասկացվում են բոլոր ձեռնարկությունները, որոնց բաժնետոմսերի հսկիչ ծրարը մասնավոր ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականությունն է:

↑ ↓ սլաքները ցույց են տալիս ճյուղային ցուցանիշների փոփոխություններն անցյալ տարվա բալերի համեմատությամբ: Մի սլաքը ցույց է տալիս բալի փոփոխությունը մեկ աստիճանով (օրինակ, 4-ից 4+), երկու սլաքները՝ երկու աստիճանով: Վերև ուղղված սլաքը նշանակում է բալի բարձրացում, ներքև ուղղվածը՝ նրա նվազում:

Վերը բերված թվերը ցույց են տալիս, որ Հայաստանում մասնավոր սեփականության ինստիտուտը կարելի է կայացած համարել: Խոսքն այստեղ չի վերաբերում վերջինիս գործունեության արդյունավետությանը, այլ ՀՆԱ-ում տնտեսության մասնավոր հատվածի ունեցած տեսակարար կշռին: Այդ ցուցանիշով (75%) մեր հանրապետությունն Ալբանիայի, Բուլղարիայի, Դրոբազստանի, Լիտվայի և Լեհաստանի հետ միասին առաջ է անցնում հետհամայնավարական բոլոր երկրներից՝ զիջելով միայն Հունգարիային, Սլովակիային, Չեխիային և Էստոնիային (80%):

Տնտեսության անցումային փուլը բնութագրող մյուս ցուցանիշների բարելավման ուղղությամբ դեռևս լուրջ անելիքներ կան, քանի որ Հայաստանն այդ ցուցանիշների առումով էապես զիջում է մեզ համար օրինակելի համարվող այնպիսի երկրների, ինչպիսիք են Հունգարիան, Չեխիան, Էստոնիան, Սլովակիան, Լեհաստանը, Լատվիան, Լիտվան և այլն: Մեզանում հատկապես թույլ են զարգացած արժեթղթերի շուկան և ոչ բանկային ինստիտուտները, սակայն ուրախալի է այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունն իր գործունեության 2007-2012թթ. ծրագրում կարևոր տեղ է հատկացնում այդ ոլորտների զարգացմանն ուղղված պետական քաղաքականության ակտիվացմանը [1, էջ 16]: Սակայն պետք է նշել, որ ծրագիրը չի սահմանում նշված խնդրի լուծմանն ուղղված որևէ կոնկրետ մեխանիզմ, չի պարունակում քանակական չափորոշիչներ, այլ առավել դեկլարատիվ բնույթի է, ինչը քննարկվող ոլորտների կայուն զարգացման համար լուրջ երաշխիքներ չի ապահովում, եթե առաջիկայում չմշակվեն դրանց իրականացման առանձին ծրագրեր և միջոցառումների ժամանակացույց:

Այժմ կրկին անդրադառնանք պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությանը, որն անցումային փուլում գտնվող մեր պետության համար կարևորագույն տնտեսագիտական հիմնահարցերից մեկն է: Հատկանշական է, որ այս խնդիրը ՀՀ կառավարությունը ևս կարևորում է [24, p. 5]: Խնդիրն այն է, որ զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, թե ինչպես վերջիններս տնտեսության բազմաթիվ ոլորտներում հրաժարվելով (մասամբ կամ ամբողջությամբ) պետական սեփականությունից՝ սկսեցին ավելացնել պետական ծախսերը, որի բացասական հետևանքների մասին վերը բավականաչափ խոսվել է: Մյուս կողմից՝ անցումային փուլում հատկապես կարևորվում են պետության ինստիտուցիոնալ և օրինակաստեղծ գործառույթները, մեծանում է պետության՝ որպես հասարակության սոցիալական արդարության երաշխավորի և տնտեսության լոկոմոտիվի դերը, որոնք պահանջում են պետության դերի մեծացում, մասնավորապես՝ պետական ծախսերի ավելացում: Ուստի, անհրաժեշտ է պետության տնտեսական քաղաքականությունն իրականացնել նախապես «ուրվագծված» պետության դերի և տնտեսությանը վերջինիս միջամտության սահմանների հստակության պայմաններում:

Աղյուսակ 4

Համախառն պետական ծախսերն անցումային տնտեսությամբ երկրներում (% ՀՆԱ)<sup>1</sup>

Երկրները	1999	2000	2001	2002	2003	2004	2005 գնահատում
<b>Արևելյան Եվրոպայի կենտրոնական մաս և Բալթյան երկրներ</b>							
Չեխիա	43.1	42.6	45.2	47.3	47.7	44.6	44.1
Էստոնիա	40.3	35.3	33.5	34.3	34.1	35.9	38.5
Հունգարիա	49.9	47.4	48.0	52.1	49.8	49.5	50.6
Լատվիա	41.0	36.7	34.6	35.3	34.6	35.6	37.0
Լիտվա	37.2	32.5	31.0	30.6	30.8	33.5	32.9
Լեհաստան	47.1	43.6	43.6	44.2	44.6	42.5	43.2
Սլովակիա	56.9	63.1	43.8	43.3	39.4	38.9	36.8
Սլովենիա	42.6	43.0	44.0	43.6	44.0	44.1	44.4
<i>միջինը</i>	44.8	43.0	40.5	41.3	40.6	40.6	40.9
<b>Հարավարևելյան Եվրոպա</b>							
Բուլղարիա	39.6	39.7	38.3	37.2	38.2	37.5	38.3
Խորվաթիա	55.5	56.6	52.7	50.7	51.4	50.0	48.8
Ռումինիա	35.5	35.3	33.3	32.3	30.9	31.1	31.1
Ալբանիա	34.5	31.8	31.5	31.0	27.7	28.8	26.7
Բոսնիա և Հերցեգովինա	65.0	56.6	52.1	53.9	51.3	50.8	47.7
Մակեդոնիա	35.4	33.7	40.3	40.5	38.5	35.8	37.8
Չեռնոգորիա	-	36.5	39.9	37.3	45.6	43.3	42.0
Սերբիա	-	40.4	43.8	51.8	46.7	45.3	43.1
<i>միջինը</i>	44.3	41.3	41.5	41.8	41.3	40.3	39.4
<b>ԱՊՀ և Մոնղոլիա</b>							
Ռուսաստան	36.7	33.7	34.6	37.1	35.7	33.6	36.0
Հայաստան	30.1	25.9	20.9	19.3	18.9	17.2	17.7
Ադրբեջան	23.6	20.8	18.7	27.7	28.3	26.0	23.5
Բելառուս	47.3	45.9	46.8	46.6	47.7	46.0	49.1
Վրաստան	22.1	19.2	18.3	17.8	18.7	19.5	24.9
Մոլդովա	36.6	34.5	29.4	31.5	33.1	35.2	38.0
Ուկրաինա	34.1	34.5	34.4	35.6	37.2	40.0	42.7
Ղազախստան	23.2	23.2	23.0	21.0	22.5	22.0	22.6
Ղրղրզստան	34.0	29.9	26.0	28.1	27.4	27.2	28.3
Մոնղոլիա	39.4	41.5	43.9	44.4	42.1	39.4	33.7
Տաջիկստան	14.9	19.2	18.4	19.2	19.1	20.3	23.0
Թուրքմենստան	19.4	23.9	21.1	18.1	19.4	19.6	18.8
Ուզբեկստան	32.0	38.9	36.0	37.2	33.9	32.1	32.6
<i>միջինը</i>	30.3	30.1	28.6	29.5	29.5	29.1	30.1
<b>Անցումային տնտեսությամբ բոլոր երկրների միջինը</b>	<b>37.7</b>	<b>36.8</b>	<b>35.4</b>	<b>36.2</b>	<b>35.8</b>	<b>35.4</b>	<b>35.7</b>

Աղյուսակ 4-ից պարզ երևում է, որ Հայաստանն անցումային փուլում գտնվող 29 երկրների շարքում 2005թ. ունեցել է ՀՆԱ-ի համեմատ ամենափոքր պետական ծախսերը: Բացի այդ, դիտարկվող ժամանակահատվածում (1999-2005թթ.) ոչ մի երկիր, բացառությամբ Սլովակիայի և Բոսնիա-Հերցեգովինայի, ՀՆԱ-ում պետական ծախսերի մակարդակով այնպիսի կտրուկ անկում չի արձանագրել, ինչպիսին Հայաստանին է (12.4 տոկոս-

<sup>1</sup> Տվյալները՝ ըստ EBRD տարբեր տարիների զեկույցների:

ասյին կետ), իսկ նշված երկրներն էլ, չնայած կտրուկ անկմանը, 2005թ. դրությամբ ՀՀ-ին գերազանցել են համապատասխանաբար 19.1 և 30.0 տոկոսային կետերով: Մեր երկիրը չի կարող համեմատվել նույնիսկ ԱՊՀ անդամ երկրների միջին ցուցանիշի հետ, իսկ առավել զարգացած Արևելյան Եվրոպայի կենտրոնական մասի և Բալթյան երկրների համանուն ցուցանիշին զիջում է ավելի քան 2.3 անգամ:

Այսպիսով, ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում պետական ծախսերն էական ավելացման կարիք ունեն, հատկապես, եթե հաշվի առնենք մեզանում գոյություն ունեցող բավական մեծ ստվերային տնտեսությունը (պաշտոնական և ոչ պաշտոնական շրջաններում խոսվում է ստվերի 30-ից մինչև 80%-ի մասին), որը խոչընդոտում է ՀՆԱ-ում պետական ծախսերի իրական մակարդակի որոշմանը: Փաստորեն, եթե հաշվի առնվի նաև պաշտոնական վիճակագրության մեջ չներառվող ազգային արդյունքի ստվերային մասը, ապա պարզ է դառնում, որ մեզանում պետության կողմից տնօրինվող համախառն ներքին արդյունքի բաժինը շատ ավելի փոքր է այն մեծությունից, որն արտացոլում են պաշտոնական թվերը:

Պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության ընդունելի մակարդակը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն կարևոր հանգամանքը, որ Հայաստանը գտնվում է բարդ աշխարհաքաղաքական դիրքում, ինչը տեսանելի ապագայում թույլ չի տա կրճատել պետական բյուջեի ծախսային հոդվածներից ամենամեծը՝ ռազմական ծախսերը: Արցախյան հիմնահարցի առկայության պայմաններում այն վերջին 5 տարիների ընթացքում շարունակ աճել է՝ 11%-ից (2002թ.) դառնալով 12.4% (2006թ.), իսկ 2007թ. պետական բյուջեով ռազմական կարիքներին ուղղվող ծախսերը կազմելու են ընդհանուր ծախսերի 14.7%-ը:

Անցումային շրջանում մեծ կարևորություն ունեն նաև սոցիալական, կրթության և առողջապահության ոլորտներին ուղղվող պետական ծախսերը, որոնք, ցավոք, մեզանում չափազանց փոքր են: Այսպես, սկսած 1991թ. (3.2% ՀՆԱ-ի նկատմամբ) առողջապահությանն ուղղվող ծախսերը սկսել են նվազել և 2005թ. կազմել են ՀՆԱ ընդամենը 1.3%-ը: Այդ ցուցանիշով Հայաստանը զիջում է Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ անդամ բոլոր երկրներին՝ բացառությամբ Վրաստանի և Տաջիկստանի: Նույնը կարելի է ասել նաև կրթության ոլորտում կատարվող պետական ծախսերի մասին, որոնք թեև 1997թ. (1.7%) սկսած՝ ունեցել են որոշակի աճի միտում, այնուամենայնիվ, 2005թ. այդ ցուցանիշը կազմել է 2.4%, որով Հայաստանը հետհամայնավարական երկրների շարքում առաջ է անցնում միայն Վրաստանից:

Նշված խնդիրների լուծման ուղղությամբ ՀՀ կառավարությունը ծրագ-

րել է սոցիալական ապահովությանն ու սոցիալական ապահովագրությանն ուղղվող ծախսերը մինչև 2012թ. ավելացնել 2.2 անգամ՝ հասցնելով մինչև ՀՆԱ 6.2%-ի, կրթությանն ու գիտությանը հատկացնել 3.5% (2012թ.), իսկ առողջապահությանը՝ առնվազն ՀՆԱ 2.2%-ը [1, էջ 27-30]:

### **Եզրակացություն**

Ակնհայտ է, որ պետության կարգավորիչ դերի պահանջ գոյություն ունի մեր կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, սակայն ասվածը պետք է դրսևորվի պետության՝ որպես իր սեփականության արդյունավետ տիրոջ ու կառավարողի, գործառույթի իրականացման ժամանակ՝ շուկայական մրցակցության ու բազմակացութեան սեփականության պայմաններում, որտեղ ոչ պետական սեփականությունը թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) ծավալում գերակշիռ բաժին ունի: Այդ կապակցությամբ մեծանում է պետական ձեռնարկատիրության (այդ թվում՝ խոշոր կորպորատիվ կառուցվածքներում և բաժնետոմսերի պետական փաթեթների կառավարմանը պետության մասնակցության տարբեր ձևերի) արդյունավետության բարձրացման խնդրի լուծումը և սեփականության ձևերի փոփոխության վրա նրա ներգործությունը:

Տնտեսության զարգացման համար կարևոր է ճիշտ իրագործել պետության կողմից հաստատված կանոնները, քանի որ նույնիսկ դրանց մի մասի ոչ ճիշտ իրագործումը հանգեցնում է տնտեսական ու սոցիալական ճգնաժամերի: Հետևապես, պետության դերը հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացման գործում առանձնահատուկ է. պետությունը ոչ միայն պետք է հաստատի ու հետևի ամրագրված կանոնների իրագործմանը, այլև ինքը ենթարկվի դրանց:

Ժամանակակից աշխարհում պետության դերի վերիմաստավորումը ենթադրում է արդեն գոյություն ունեցող կամ նոր այլընտրանքային կառավարման գործիքակազմերի կիրառություն, որոնք կարող են բարձրացնել նրա գործունեության արդյունավետությունը: Այսօր տնտեսությունների մեծ մասում պետական կարգավորման դերն առավել ընդլայնված և համեմատաբար բարդ է, քան նախկին ժամանակահատվածներում, քանի որ պետական կարգավորման դաշտում ներգրավված են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են շրջակա միջավայրի պահպանությունը, մենաշնորհների կարգավորումը, առողջապահությունը, սոցիալական ապահովությունը, կրթությունը այլն: Իհարկե, այս ամենն առաջացնում է պետական ծախսերի մեծացման անհրաժեշտություն, որը բերում է պետության վերաբաշխման գործառույթի մեծացման, կամ որ նույնն է՝ ՀՆԱ-ում պետական ծախսերի մակարդակի

ավելացման: Հաշվի առնելով նշված օբյեկտիվ պատճառները, այնուամենայնիվ, կարծում ենք, որ պետությունները չպետք է գնան ծախսերի անընդհատ մեծացման ճանապարհով, այլ պետք է հնարավորինս շատ ոլորտներ հանձնեն մասնավոր ընկերությունների տնօրինմանը: Այս դեպքում պետք է առաջնորդվել Ա.Լինքոլնի՝ դեռևս 1865թ. ասած այն մտքով, որ պետությունը պետք է անի միայն այն, ինչը քաղաքացիներն իրենք չեն կարող անել լավագույն ձևով: Դրանով հասարակությունը ձեռք կրերի ընտրության ավելի մեծ հնարավորություն, հետևաբար՝ նաև ազատություն: Իսկ ազատությունը ոչ միայն հասարակության զարգացման գլխավոր նպատակն է, այլ նաև դրա կարևորագույն նախապայմաններից մեկը:

Հուլիս, 2007թ.

### Աղբյուրներ և գրականություն

1. Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիր, Ե., 2007:
2. *Смит А.*, Исследование о природе и причинах богатства народов, М., 2007.
3. *Մարկոսյան Ա.*, Պետությունը և շուկան. գիրք առաջին, Ե., 2000:
4. *Асмус В.*, Платон, М., 1975.
5. *Шпенглер О.*, Закат Европы. Очерки морфологии мировой истории, т. 2, Минск, 1999.
6. *Кант И.*, Соч., т. 4, часть 1, М., 1965.
7. *Локк Дж.*, Избранные философские произведения, т. 2, М., 1960.
8. *Гегель Г.*, Философия права, М., 1990.
9. *Գորթոնի Ջ.*, Տնտեսագիտություն, Ե., 1999:
10. *Стиглиц Дж.*, Экономика государственного сектора, М., 1997.
11. *Աղաջանյան Հ.*, Պետությունը և տնտեսությունը, Ե., 2003:
12. *Հովականյան Յու.*, Հոգեվերլուծական փիլիսոփայություն, Ե., 2001:
13. *Մարկոսյան Ա.*, Հայաստանը XXI դարի մարտահրավերների առջև, Ե., 2004:
14. *Gerschenkron A.*, Europe in the Russian Mirror.
15. [www.cato.ru/pages/137?idcat=25&id-theme=172](http://www.cato.ru/pages/137?idcat=25&id-theme=172)
16. *Ջ.Մ. Քեյնս*, Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն, Ե., 2006:
17. «Вопросы экономики», 2004, # 9.
18. *Фридрих Август фон Хайек*, Дорога к рабству, М., 1992.
19. *Токвиль А. де*, Демократия в Америке, М., 1992.
20. The political economy of public sector reform and privatization. Edited by Ezra N. Suleiman, John Waterbury, 1990, Westview Press, Inc.
21. [www.cato.ru/pages/151?idpage=137&idcat=42](http://www.cato.ru/pages/151?idpage=137&idcat=42)

22. *Hilaire Belloc*, *The Servile State*, 1913, 3rd ed. 1927.
23. *Гайдар Е.*, Гибель империи. Уроки для современной России, М., «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2006.
24. *Gwartney J.*, *The size and function of Government and Economic Growth*, Washington, 1998.
25. [www.cato.org/pubs/journal/cj18n2/cj18n2-1.pdf](http://www.cato.org/pubs/journal/cj18n2/cj18n2-1.pdf). *Krueger A.O.*, *The Political Economy of the Rent-Seeking Society* // *American Economic Review*. Vol. 64 (1974), p. 291–303.
26. *Դավոնյան Ա., Մարկոսյան Ա., Մարգարյան Հ.*, Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Ե., 2003:
27. *Մարկոսյան Ա.*, Պետական ձեռնարկությունների ապապետականացման կառավարում. մեթոդաբանություն, ռազմավարություն և արդյունքներ, Ե., 1997:
28. Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության հաշվետվություն, Երևան, 2006:
29. *Transition report 2005. Business in Transition*. European Bank for Reconstruction and Development, 2005.
30. *Transition report 2006*. European Bank for Reconstruction and Development, 2006.

## РОЛЬ ГОСУДАРСТВА В ЭКОНОМИЧЕСКОЙ СИСТЕМЕ

*Ашот Маркосян*  
*Давид Агаджанян*

### Резюме

В историческом разрезе существует несколько подходов к определению понятия государства как к главному институту, отражающему объединенную волю общества.

Существует множество концепций, которые пытаются объяснить роль государства в обществе, его функции, оптимальную степень участия государства в экономике страны. Часть этих концепций носит сугубо теоретический характер, а часть из них имеет и практическую направленность. Сложность проблемы состоит в том, что тот или иной вариант не может считаться одинаково оптимальным для всех стран. Необходимо в каждом конкретном случае учитывать географические, исторические, культурные, этнорелигиозные, национальные и многие другие особенности отдельных государств. Но

существует одна общая для всех стран закономерность, которая состоит в том, что параллельно с развитием общества государство берет на себя новые обязательства, неоднозначно обеспечивающие стабильность развития общества. Увеличение роли государства направлено на обеспечение устойчивого развития общества, социальной справедливости, нейтрализации причин, приводящих к экономическому кризису, и т.д. Но необходимо иметь в виду и то, что подчас именно неправильно разработанная политика приводит к тяжелым социально-экономическим последствиям.

Недалекое прошлое человечества свидетельствует о том, что государство недостаточно развито как полноценный предприниматель, результатом чего в развитых странах явился отказ от множества действующих в условиях государственного предпринимательства отраслей в пользу частного сектора. Но наряду с этим увеличилась степень участия государства в перераспределении ВВП. Это обстоятельство тоже является предметом обсуждения экономистов, так как сильное государство прямо или косвенно ограничивает свободу граждан, а также, влияя на накопления и, следовательно, на инвестиции, приводит к замедлению экономического роста.